ԲՈՂԵՆՇՏԷԴՏ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Գրեց՝ ԱՐՏ. ԱԲԵՂԵԱՆ

I

ԲՈՂԵՆՇՏԷԴՏ ԵՒ ԱԲՈՎԵԱՆ

19–ՐԴ դարի 40–ական թուականներին Անդրկովկասեան Հայաստան այցելած գերման ականաւոր ճամբորդների թուին է պատկանում նաեւ Ֆրիդրիխ Բոդենշտէդտ*):

«Հայրենիք»ի ընթերցողները արդէն ծանօթացան գերման մի ուրիշ ճամբորդի՝ Բարոն Աուգուստ Ֆոն Հաքստհաուզէնի գործին, որ ա՛յնչափ կարեւորութիւն ունի, մեր կարծիքով, ժամանակակից հայ կեանքը ուսումնասիրելու տեսակէտից:

Բոդենշտէդտ գալիս է այդ կողմից լրացնելու Հաքստհաուզէնի գործը:

Վերջինս Հայաստան է այցելած ինչպէս տեսանք, 1843 թուականի օգոստոսին, իսկ Բոդենշտէդտ՝ 1844–ի մարտի վերջերին: Որպէս քաղաքատնտես՝ Հաքստհաուզէն իր ուշադրութիւնը դարձրել է գլխաւորապէս հայոց ներքին–ընկերային կեանքի վրայ, թէեւ նա մեզ շատ թանկագին նիւթեր է մատակարարում նաեւ ժամանակակից հայ ազգագրութեան եւ ժողովրդական բանահիւսութեան մասին: Իսկ Բոդենշտէդտ, որպէս գրականագէտ եւ բանաստեղծ, կենտրոնանում է առաւելապէս վերջին ճիւղի վրայ, անտես չանելով նաեւ պատմականն ու ներքին–ընկերայինը: Բոդենշտէդտ, որ տարիքով էլ բաւականաչափ կրտսեր է եղել Հաքստհաուզէնից (վերջինս ծնուել է 1792 թ. փետրուար 3–ին Վեստֆալիայում եւ մեռել 1866 թ. դեկտ. 31–ին Հաննովէրում), վերջինիս բաղդատութեամբ շատ աւելի մեծ հռչակ է վայելել Գերմանիայում, թէեւ 19–րդ դարի հայ կեանքի ուսումնասիրութեան տեսակէտից երկուսն էլ հաւասարաժէք կարեւոր նշանակութիւն ունին մեզ համար, թերեւս Հաքստհաուզէն մինչեւ իսկ աւելի, քան Բոդենշտէդտ:

Ո՞վ էր Բոդենշտէդտ:

Նա ծնուել է 22 ապրիլ 1819 թ. Փայնէ (Peine) գիւղաքաղաքում՝ Հաննովէրից ոչ հեռու: Ուսանողական տարիներում նա հետեւել է հին եւ նոր լեզուների, ինչպէս եւ պատմական ու փիլիսոփայական գիտութեանց: Շրջորհիւ Ռուսաստանում ապրող իր ծանօթների՝ տակաւին բոլորովին երիտասարդ հասակում, 1840–ին, Բոդենշտէդտ Մոսկուա է հրաւիրուում՝ որպէս դաստիարակ եւ մասնաւոր ուսուցիչ պատանի իշխ. Գոլիցինների: 1843–ի աշնանը նա տեղափոխուում է Թիֆլիս՝ որպէս տեսուչ ուսուցչական ճեմարանի (ինստիտուտ) եւ լատիներէնի ու ֆրանսերէնի ուսուցիչ էլ՝ տեղական գիմնազիոնում: 1844–ի գարնանը նա ճամբորդում է Հայաստան, լինում է Երեւանում ու Էջմիածնում: Նա ճամբորդում եւ ուսումնասիրում է նաեւ Կովկասի ուրիշ երկրամասեր: 1845–ին Բոդենշտէդտ Կերչի, Օդեսայի եւ Կ. Պոլսի ու Զմիւռնիայի վրայով վերադառնում է իր հայրենիքը՝ Գերմանիա:

Այստեղ նա նուիրուում է ստեղծագործական խաղաղ աշխատանքի եւ շուտով ձեռք է բերում, որպէս քննադատ, խմբագիր, գիտնական ու բանաստեղծ, մեծ հռչակ: Երկար տարիներ նա Միւնիխէնի համալսարանում ուսուցչապետի պաշտօն է վարում, դասախօսելով անգլիական ու սլաւ լեզուներ եւ գրականութիւն: 80–ական թուականներին ճամբորդում է Ամերիկա: Վերջը հաստատուում է Վիսբադէն քաղաքում, ուր եւ մեռնում է 18 ապրիլի 1892 թ.: Այդտեղ նրան ի յիշատակ կանգնեցնում են արձան:

Բոդենշտէդտ գերման առաջնակարգ բանաստեղծների եւ գրականագէտների շարքն է դասուած: Ունի բազմաթիւ աշխատութիւններ

*) Շեղագիր չարուած բառերը իմ ընդգծումներն են, իսկ տառերը անչատ չարուածները՝ Բ.–ինը: Ա.